

Ա՛հ, այս ցայգուն
 Պիտի անցնիմ դարձեալ Վախիս ճամբաներէն.
 Ալյափրացա՛ծ, ուշակորոյս,
 Գիշերներու ըմպած գինին խաւարածոր,
 Պիտի անցնի՛մ ես այս գիշեր՝
 Երկիւղիս սեպ ճամբաներէն,
 Իմ գանկիս տակ
 Յոյսի ոսկի բոցին անուրջն առկայծելէն:

Ալյոզնա՛ծ եմ
 Ըսպասելէն տենչանքներուս մեղրին անոյշ,
 Ու տարածամ այս յածումին մեջ երջանի՛կ պիտի ըլլամ
 Եթէ թունեղ խա՛յթ իսկ բերեն
 Ուղեմուլար մեղուներն իմ տենչանքներուս:

28. ԲԻԻՐԵՂԻ ԴԻԹԱԼԵ

Մանուկ մըն է, որ կայներ դեմն հըրածամ արեւին,
 Կ'օծէ հոգին իր շուշան լուսացնցուղ երագով,
 Ու կը ծըծէ հոտեւան խտղանքն ու դողն այգուն զով,
 Մինչ մեղեսիկ աչուկներն Եսին ցոլթով կը վառուին:

Նըշուլագեղ ու պայծառ ցոլթով վճիտ իր Եսին՝
 Երկինքն՝ որուն հրճուանքի ակեր ունի կապուտակ.
 Ու կեանքի սերն յորդած է հոն լեռնածին զերթ վըտակ՝
 Ուր կաթիլներ ու ցայտքեր հետզհետէ կը հոսին:

Բիւրեղ մը կայ ձեռքին մեջ՝ զոր կը ճօճէ դարձդարձիկ,
 Եօթը գոյնին տե՛նչն ունի, լոյսի անհուն խաղերուն.
 Երանգներու, շողերու կ'ըղծայ անուրջն օրօրուն,
 Եւ արեւին կը նայի միշտ կաթոգին ու բաղձիկ:

Ա՛հ, ի՛նչ դիւթանք, ծիածան ծոպե՛ր ունի ամէն բան...
 Շափիւղանե՛ր... կարկեհա՛ն... գիւմրի՛ւթ, շողակ ու թարշիշ...
 Ծովն է լեցուն գոյներով ու ծիրերով ոսկենիշ,
 Ինչպէս դաշտերն ու լեռներ, ինչպէս մարմանդն ու ճամբան:

Ծափ կը զարնէ, ծիծաղէն ծըլե՛ր է ծիրն իր այտին,
 Անո՛յշ արեւ մանկական, ամպ ու մեզի անգիտակ,